ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է Կենտրոնական գրավաճառանոցում մի զրբ-դի պ. Ա. Քիշմիշեանցի—«ՔԻՇՇՈ» և ԿՐԱԿԻ ՇՈՒՐՋԸ» վէպերով: Գրքոյկի գինն է երեսուն կոպ.: Բոլոր արդիւնքը յատկացրած է յօգուտ ՎԱՆԱՁ ՍՈՎԵԼՈՑ:

4—4

Въ Кавказскомъ Обществѣ Сельскаго Хозяйства въ Тифлисѣ имѣется для продажи яйчки шелковичныхъ червей французской породы, воспитанныя Барономъ Бахомъ, въ окрестностяхъ Тифлиса, по 35 коп. за золотникъ.

Иногородныя обращаются съ требованіями въ Общество съ препровожденіемъ слѣдуемыхъ денегъ, почтовыя расходы на счетъ Общества.

3—3

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Յամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳԻՒՂՈՒՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մըշակի» խմբագրատունը Յ. ՄԷԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ գօտոր Բօյի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

Գ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԳՆԱԳՐՈՒԹԵԱՆ և զոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՁՈՒԹԵԱՆ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գօլովինսկի պրոսպեկտի վրա, Մուխրանովա տանը, Կուրի տակ, առաւօտեանը 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով: Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար:

7—10

Օրերուս գուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Յ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

1. Ընդամենը—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.:
2. Գօտոր Բօկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.:
3. Ֆրէյդուն—Տաւիղ յիմնալի Տփ. 80 թ. -- 30 կ.:
4. Ղուկասեանց—ընդհանուր պատմութիւն հայոց ղպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.:
5. Վամառ-Արաթիպայ—մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.:
6. Ղղնը կազմած — 25 կ.:
7. Սիլվիս Փէլլիքոյ Հախմնիսցին Ֆրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ֆրանչէսկան, Լէօսիարդիի առ Խոտիան. Տարօնոյ ծերը: Ը. Մ. Եր. Պ. Տփ. 80 թ. գինն է — 70 կ.:

9—10

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱԻՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրոնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօխենեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խրուրգիական և աչքերի հ., Շաֆմրօրսկի վիներական և կաշու հ., Բարայեան Ջոյին և հոգկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խիրուրգական հ., Վ. Զօրով վիներական և բոգալի հ., Բէյլս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեսով, Լիսիցով և Վերմիշով ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցով և Բուդկօվսկի ներքին հ., Շաֆմրօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւններ:

Հինգշաբթի. Վ. Զօրով վիներական և բոգալի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցով և Վերմիշով ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրոնսկի կանանց հ., Մինկևիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեսով և Լիսիցով ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շաֆմրօրսկի և Աստուածատուրով վիներական և կաշու հ., Բարայեվ Ջոյին և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցով և Վերմիշով ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. Զօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվճար աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբով չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւօտեան Օրբելատ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցով:

Մ. Միանսարեանցի ներքոյ յիշեալ տպագրութիւնների ամեն մի տպագրութեան մնացած բոլոր օրինակները միասին գնողներին (Թիֆլիս, Հայոց Վանքի Մեծ և փոքր փողոցների անկիւնում, տպագրողի սեպհական տանը, № 4|2, բնակարան № 6) կը վաճառուին յետագայ գներով:

1. Հայկական Քնար, երգարան, 8 ծալ, եր. 712 և առանձին 32 եր. այբբենական ցանկ, երկուսը միասին . . . . . 70 կ.

4 Հազար օրինակից մնացել է մօտ հազար օրինակ, մօտ 700 բուբլու:

2. Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, զանազան առանձին յաւելուածներով, 8 ծալ, եր. 274 . . . . . 20 կ.

1200 օրինակից մնում է մօտ 700 օրինակ, մօտ 140 բուբլու:

3. Վայելչագրութեան գաղափարներ, 4 ծալ, 24 երես: 6 հազար օրինակից կը լինի մնացած մօտ 4 հազար օրին., մօտ 500 բուբլու: . . . . . 10 կ.

4. Գունաւոր մելանով տպած վայելչագրութեան վարժութիւններ, որ տպածի վրա սև թանաքով գրելով, դիւրութեամբ կարելի լինի ուղղել և գեղեցկացնել ուսանողի գրութիւնը: № 1—№ 5, հասարակ թղթի գնով, տ. սուսպան, կամ 480 թերթը, 4 բուբլի, մօտ 340 սուսպ, մօտ 1360 բուբլու: Թերթը մի կողմից պակաս:

5. Տողաշարներև տողացանցեր մեծ թաքաղաղ, 4 երես տպած, 6 հազար օրինակից մօտ 4 հազ. օրինակ կը լինի, մօտ 52 բուբլու, թերթը . . . . . 5 կ.

6. Կոմբ ուսուցչապետի և անգրիացւոց թագուհու բժշկի խնամատարութիւն երեխայոց, 8 ծալ, եր. 300: . . . . . 15 կ.

1200 օրինակից մօտ 300 օրինակ կը լինի մնացած, մօտ 52 բուբլու:

Մի քանի այլ տպագրութիւններ մօտ 20 բուբլու:

Տպագրողը ինքը բնակվում է Պ. Պետերբուրգ, Знаменская, домъ № 22, кв № 7, на углу Басейной.

Վաճառվում է նոր հրատարակված «Ցիսնաղի Տաւիղ» Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրոնական գրավաճառանոցներում: Գրքոյկի գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաձեանցին հետևեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

1. Երգնկեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում. գինն է . . — ր. 20 կ.
2. Մեծատուենեանց—Նրբարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . . . 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց: Դիֆտերիտ բոլոզացաւ . . — ր. 25 կ.
4. Բժիշկ. Դ. Տէր-Գրիգորեանց—Վարակիչ հիւանդութիւններ.

(Ցաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիտ, ընդհատ տենդ, խոլերայ, դեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ.)

Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտպանողական միջոցներ,

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

8—8

Փետրվարի 12-ից ԲԱՑՎԵՑ իչխան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԷՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով, թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվին ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով. կոնֆիկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

ДВОЙНАЯ ИТАЛАНСКАЯ БУХГАЛТЕРІЯ

Մի երիտասարդ տալիս է հաշուապահութեան դասերը բանկի, ֆաբրիկայի, առևտրական կոմանիաներութեան, երկաթուղու և այլն:

Հարցնել Թիֆլիսի Կազեանի Պալատում, կամ Սուրբ Նշանի փողոցում, Մարիամի սուդի դիմացը, № 17 պ. Յակոբ Տէր-Յակոբեանցին:

1—5

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԸ ստարշինաների խորհուրդը յայտնում է պ. պ. անդամներին, որ ընդհանուր ժողովի վճռին համաձայն՝ անդամական լրացուցիչ տուրքի 7 բուբլի վճարելը նշանակված է մինչև ապրիլի 1-ը 1880 թվականը: Իսկ ովքը չի վճարի այդ փոքր նշանակված ժամանակամիջոցին, կը համարվի ընկերութեան անդամութենից հրաժարեցրած:

Յունվարի 31-ին 1880 թ. Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասի Փոխարքան բարձր հանձնար հաստատել «Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան» կանոնադրութիւնը: Այս ընկերութիւնը մարտի 9-ին ունեցաւ ընդհանուր ժողով, որը ընտրեց իւր վարչութեան և խմբագրական մասնաժողով:

Այն անձինք, որոնք կը ցանկանան ընկերութեան անդամ գրուել, կարող են դիմել ընկերութեան գանձապահ պարոն Մոսէսի Թաւադեանին Թիֆլիսի Առևտրական բանկայ առաւօտեան 9-ը ժամից մինչև 2 ժամը: Իսկ այլ և այլ խնդիրներ և տեղեկութիւններ այդ ընկերութեան մասին ստանալու համար պէտք է դիմել ընկերութեան վարչութեան նախագահ պարոն Արգար Յովհաննիսեանին: Վարչութեան ատենադպիր Ա. Քիշմիշեան:

1—10

Տպագրութեան համար պատրաստ են «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ՇՇմարտութեան) Պրէսկոտի, «Աբրահամ Լինկօլն» ստրուկներին ազատող Վիլհելմ Հօֆմանի, և Մոլիէրի «Մուսնացողներին խրատ» հայերէն թարգմանութիւնները:

Թարգմանվում են Մոլիէրի հետ «Տարտիֆ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

Անցած փետրվարի 17-ից նոտարական ատոմով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԷՅ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ԼԱԶԱՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվին ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱԾ ԹԻՒԸ, իմ նրան տուած տոմսակներ (росписки) մանաւոր և բանկային վէկսելներ, և բոլոր ուրիշ պարտաւորագիրներ և ակաեր, նոր անուաներ եմ համարում և ինձ պարտաւորված համարում վճարել:

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՈՎ:

Дозволено Цензурою 27 Марта 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա Միխելսոնի Типографія А. А. Михельсона